

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա.  
ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ  
ՄԱՍԻՆ

14) Եկեղեցոյ հայրերը ինչպէս կը  
մեկնաբանեն Յիսուսի մկրտու-  
թեան դրուագը:

Զաքարիա Ա. Զազեցի կաթողիկոս (855-876) կ'ըսէ. «Այսօր երկինքն ու երկիրը նոր եղան, որովհետեւ բոլոր ջուրերը մաքրուեցան ամբողջ աշխարհը որդեգրութեան համար երածներով։ Այսօր առաջին խաւարն աւարտեցաւ, որ սփռուած անզարդութիւնն էր բռնել։ Այն համատարած եւ համասփիւռ լոյսը լուսաւորեց բոլոր մարդկանց, որոնք եկած են այս աշխարհ եւ գալու են։ Այսօր Յորդանանն առաջին ջրեղեղի նման անօրէնին եւ կարծեցեալ իշխանին իր դեւրու բազմութեամբ ընկղմեցաւ... Այսօր մկրտութեամբ Քրիստոսի հետ ջուրի մէջ թաղուեցանք, Անոր մահուամբ Անոր հետ վերստին ծնուելով Անոր հետ կենդանացանք, Անոր հետ պիտի թագաւորենք յաւիտենական կեանքին մէջ։ Այսօր կուապաշտ մոլորութեան ստուերը մարեց։ Մարդիկ մեղքերէն ազատեցան եւ հրեշտակներուն հետ թեւածելով կը պայծառանան եւ կը լուսաւորուին։ Այսօր մեղսաճակ խարեբաներու մէջն ու մարախուղը, որոնք Աղամի անէծքներուն պատճառով էին հալածուեցան, քանզի Քրիստոս գալով մեզի համար անէծք եղաւ, իսկ բոլոր երկրածին ազգերը Անոր միջոցով օրհնուելու համար։


ԱՂԱՆԴԱՒՐԱԿԱՆ  
ՇԱՐԺՈՒՄՐԵՐ

ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՆՕՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ  
9 - ՄԵՌԵԼԵՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Քրիստոսի յարութեան մասին խօսած ատեն ըսինք արդէն, որ առանց մարմիններու յարութեան հաւատքին՝ մեռելներու յարութիւնը խարեկանք ու խարէութիւն է պարզապէս։ Պօղոս առաքեալ հանդերձեալ կեանքի մասին խօսելով որոշապէս կ'ըսէ, թէ ներկայիս «Մենք ալ, որ հոգիին առաջին պտուղը ունինք, մենք մեզմէ մեր անձերուն մէջ կը հառաչենք՝ որդեգրութեան, ԱՅՍԻՆՔՆ ՄԵՐ ՄԱՐՄԻՆԻՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ սպասելով» (Հռովմ. 8.23)։ Քրիստոնէութիւնը հանդերձեալ կեանքի իր պատկերացումին մէջ յունական եւ այլ աշխարհներու իմաստասիրական ըմբռնումներէն կը տարբերի ճիշդ անով՝ որ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ կ'ընդունի, որուն առաջին օրինակը եղաւ Քրիստոս...»

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ թերթը ամեն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրին, Եկեղեցիներու բանկալին մօս։ Նաև ՝Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար։

ՀԱՍՑԵ.



ԲՈՒ ԽՈՎԵԴ ԻՄ ՈՖԵՐՈՒՄ ՑՐԱԳ Է ՈՒ ԻՄ ԾԱՒՐԱՆԵՐՈՒՄ ԼՈՅ  
(Ա. 119.105)

ԺԱ. ՏՄՐԻ

ԿԻՐԱԿԻ, 29 ՅՈՒՆԻ 2018

ԹԻՒ 30

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

**Ես 58.13-59: Ա. Տիմ. 4.12-5.10:**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱՆԸ ԸՍ ՅՈՎՐԱՆՈՒ 3.13-21**

Ոչ ոք երկինք ելաւ բացի Մարդու որդիէն, որ երկինքէն իջաւ եւ որ երկինքի մէջ է։ Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ։ Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ։ Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ոչ թէ որպէսզի աշխարհ դատապարտէ, այլ որպէսզի աշխարհ փրկէ։ Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար։

Եւ դատապարտութիւնը այս է։ Հոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին։ Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին։ Սակայն, ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են։


**ԱՌԱԳ (Գ. 27-33)**

Երբ հեարաւուրութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտեար։ Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկու՛ր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ի՞նչ կը պատահի ֆեզի։ Զարիք մի՛ նիւթեր բարեկամիդ դէմ, որ ֆեզի ապաւինած է եւ յոյսը վրադ դրած։

Զուր տեղ մի՛ բշամանար մարդուն հետ, որպէսզի ֆեզի չարիք չպատճառէ։ Զարագործ մարդոց անարգ գործեր մի՛ որդեգրեր եւ մի՛ նախանձիր անոնց ընթացքին, որովհետեւ անօրեն պիհծ է Տիրոց առջեւ եւ չի հաղորդակցիր արդարներուն։ Ամրարիշտներուն տուները անէծքով լեցուն են, միջետ արդարներուն տուները՝ օրինութեամբ։

## ՍՈՒՐԵՐԻ ԵՒ ՏՕՆԵՐ

ՄՐԲՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ՝  
ԱԹԱՆԱՍԻ ԵՒ ԿԻՒՐԵՂԻ



### Ս. Աթանաս Հայրապետ

Քրիստոնէական եկեղեցւոյ մեծագոյն հայրերէն մէկն է Աքանաս Աղեքսանդրացի հայրապետ: Ծնած է Աղեքսանդրիա՝ 296 թուականին, ուր նաև շարունակած է իր ուսումը աստուածաբանական հոչակառ համալսարանին մէջ:

Ան որպէս քարտուղար սարկաւագ Աղեքսանդրիոյ պատրիարքին, ներկայ կ'ըլլայ Նիկոյ Նողովին: Ապա յաջորդելով անոր՝ 328 թուականին, եռուն պայքար կը բանայ Արիոսականութեան դէմ, անհամար նամակներ գրելով արիոսականութեան յարած եպիսկոպոսներուն: Իր ունեցած հակա-արիոսական կեցուածքին համար հինգէ աւելի անգամներ կ'ախորուի եւ պաշտօնագործ կ'ըլլայ:

Ի վերջոյ յաղթական դուրս կու գայ եւ մինչեւ իր վախճանը՝ 373 թուականին, կը մնայ Աղեքսանդրիոյ արոռին վրայ եւ կը պաշտպանէ քրիստոնէական ուղղափառ հաւատքը կառչած մնալով Նիկիական հանգանակին:

### Ս. Կիրիէռ Երուսաղումացի

Կիւրեղ եղած է քրիստոնէական եկեղեցւոյ նշանաւոր հայրերէն մէկը, բայց իր մասին տեղեկութիւններ կը պակսին: Ծնած է 315 թուականին եւ Երուսաղէմի արոռին վրայ պատրիարք ընտրուած՝ 349 թուականին: Իր գահակալութեան ընթացքին, բազմիցս կ'ախորուի արիոսական աղանդաւորներուն կողմէ, որոնք այն ժամանակ լեցուած էին Երուսաղէմին մէջ, բայց ի վերջոյ 378 թուականին վերջնականապէս կը վերահաստատուի իր արոռին վրայ եւ 381 թուականին կը մասնակցի Կոստանդնուպոլսոյ մէջ գումարուած եկեղեցւոյ Տիեզերական երկրորդ ժողովին: Ապա 386 թուականին բնական մահով կը վախճանի:

Իր գործերէն նշանաւոր է «Կոչումն Ընծայութեան» գիրքը, որ հինգերորդ դարուն հայերէնի ալ թարգմանուած է: Զափահասներու Մկրտութեան նախապատրաստող հոյակապ գործ մըն է ասիկա:

#### Ձերցում պատասխան բաժին

#### Ի՞նք ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒԻ ՔԱՂԱՄՈՐԵԱՅ ՀՆԾԱՅՑՈՒՄԸԸ

Ի հետեւումն Հին Կտակարանի, մանուկը ծնելէն ետք, մայրը երեխան 40-րդ օրը տանար կը տանի, ծննդեան անմաքրութենէն սրբուելու եւ մանուկը Աստուծոյ ընծայելու համար (տե՛ս Ղետ. 12.6-8): Այս օրէնքին սահմանադիրը Աստուած ի՞նքն է՝ Հին Ուխտի Եկեղեցին մէջ, որ Քրիստոսի վրայ ալ կատարուեցաւ: Այդ պատճառաւ, նոր Ուխտի Եկեղեցին ալ տեօրինեց այդ մէկը կատարել, ո՛չ միայն անդրանիկներու պարագային, այլ՝ բոլոր նորածիններուն:

### ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ

#### ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Ինչո՞ւ կը կատղիս բնութեանդ դէմ, ո՞վ մարդ: Անոր դէմ, որ կը զայրանաս նոյն բնութեանդ բնկերը չե՞: Օտարը եւ թշնամին ձգած սիրելիին եւ բարեկամի՞ն կը բարկանաս: Միքէ անդամդ, մանաւանդ Քրիստոսի անդամը անպատուած, թշնամած, նենգած չե՞ս ըլլար այս ձեւով, «Որովհետեւ ամէնիս ալ Անոր մարմինին անդամներէն ենք, նոյն մարմինէն եւ ուկորներէն» (Եփես. 5.30): Եղորդ դէմ ըրած լուտանքդ Անոր կը բարձրանայ, համաձայն այն խոսքին որ ըսաւ. «Ան որ ձեզ անարգէ զիս անարգած կ'ըլլայ» (Ղուկ. 10.16): Ահաւասիկ յայտարարեց, թէ ան որ իր եղբայրը նախատէ զԱստուած թշնամացած կ'ըլլայ: Բարկութիւնը մեր բնութենէն դուրս՝ չարին հնարքն է որ մեզի կը վնասէ եւ մեծապէս կը տառապեցնէ եւ մենք միշտ անոր ետեւէն կ'երթանք: Արդարեւ, ի՞նչ բան մեր մէջ աւելի սաստիկ կիրք է քան նախատելը եւ նախատուիլը, անպատուելը եւ անպատուուիլը, ատելը եւ ատուիլը, զարնելը եւ զարնուիլը, տրտմեցնելն ու տրտմիլը, բամբասելն ու բամբասուիլը: Ահա ասոնք են գործերը բանսարկուին եւ երաշխիքները անդենական տանջանքներուն: Իսկ Քրիստոսի պատրիարքները դիւրին են ու հեշտացուցիչ, եւ մարմնաւոր կեանքի մէջ արքայութեան հանգիստը կը պարգեւն, որովհետեւ ի՞նչ բան աւելի բարի է բան սիրելին եւ հեշտալին՝ բան սիրուիլը, բարեբանելն ու բարեբանուիլը եւ ամէնուն բարեկամ ու փարեկանի ըլլալը: **ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐԸ**

### ՀՈԳԵԼՈՐ ԽՈՐՀՈՒԱՏՈՒ

#### ՍՈՐՎԻՆՔ ՆՈՅԻ ԱՂԱԽԻԵՆ ԴԱՍԱԱ ՏԻՐՈԶ

Զրիեղեղի աւարտին նոյ բացաւ իր տապանին պատուհանը եւ ագուա մը ու աղաւնի մը արձակեց: Նոյ ազատութիւն շնորհեց թէ՝ ագուաւին եւ թէ՝ աղաւնիին: Ագուար չվերադարձ տապան (Ծնն. 8.7), «բայց աղաւնին իր ոտքը դնելու տեղ չգտաւ ու տապանը դարձաւ» (Ծնն. 8.9): Սիրելի՝ եղրայր եւ բոյր կը կարծե՞ս, որ եթէ հեռանաս Յիսուսւն պիտի կարենա ու աշխարհին մէջ: Կը խորի՞ս, որ սոյն աշխարհը կարող է հանգիստի համար տեղ տալ ֆեզի: Ագուար, որ չուզեց վերադարձ տապան, իրեն համար կ'ըսուի. «Ասդին անդին կը պարտէր» (Ծնն. 8.7): Այո՛, Յիսուսւն հեռացող մարդը «ասդին անդին պիտի պարտի» բայց երբեք տեղ պիտի չգտնէ, ուր կարենայ ոտքը դնել:

### ԱՌԱԿ ԳԼՈՒԽ ԺԵ.

Սիրալիր պատասխանը զայրոյթը կը մեղմացնէ, իսկ խիստ խոսքը բարկութիւնը կը գրգուէ:

Իմաստուններուն լեզուին հարազատ է բարի խոսքը, անզգամներու բերնէն միայն չարիք կը բիսի:

Ամէն տեղ Տիրոջ աչքերը կը տեսնեն եւ բարիները ե՛ւ չարերը:

Այն լեզուն որ բժշկութիւն կը բերէ՝ կեանքի ծառ է, ան որ գիտէ տէր ըլլալ անոր՝ հոգեպէս պիտի յագենայ:

Անզգամը իր հօրը խրատը կ'անարգէ, իսկ ան որ յանդիմանութեան կը հանդուրժէ՝ խոհեմ է: Երբ արդարութիւն տիրէ, ամէն ինչ կը բարգաւանի, իսկ ամբարիշտները արմատախիլ պիտի ըլլան:

Արդարներուն տուները պիտի բարգաւանին, մինչ ամբարիշտներուն գործերը կորուստի պիտի դատապարտուին: